## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Եւրոպայի հանքերուն վիճակագրութիւնը ։

ԹԷՊԷՏ Եւրոպա աշխարհքիս մէկալ մասանցը հետ բաղդատելով գոհարեղինաց, ոսկւոյ ու արծաթի հանքերու կողմանէ աղքատ է, բայց ընդհակառակն իրեն երկաթի, կապարի, պղնձի, անագի, ածուխի, աղի ու սնդիկի հանքերուն առատութեամբը անոնցմէ շատ ճոխ է ։ Հետեւեալ տախտակին մէջ կարգաւ կը տեսնուի թէ Եւրոպայի որ գաւառները ադամանդ և ուրիշ գոհարեղէնք, ոսկի, արծաթ, անագ, սնդիկ, պղինձ, երկաթ, կապար, հասարակ աղ և հանքային ածուխ և այլն կ'ելլեն, և պէտք է գիտնալ որ իւրաքանչիւր գաւառ իրեն որ և է հանքի մը առատութեան կարգաւը դրուած է ։

ԱԴԱՄԱՆԴ ։ — Ռուսի ինքնակալութեան մէջ Բէրմի կուսակալութիւնը ։

ՈՒՐԻՇ ԳՈՀԱՐԵՂԷՆՔ ։ — Աւստրիոյ կայսրութեան մէջ Պոհեմիա, Մաճառստան, Թրանսիլվանիա ։ Սաքսոնիոյ մէջ ։

ՈՍԿԻ ։ — Ռուսի ինքնակալութեան մէջ Բէրմի և Օրէնպուրկի կուսակալութիւնները ։ Աւստրիոյ մէջ Թրանսիլվանիա, Մաճառստան, Սալցպուրկ, և այլն ։ Սարտենիոյ տէրութեան մէջ Բիէմոնդէ, և այլն ։

ԱՐԾԱԹ ։ — Աւստրիոյ կայսրութեան մէջ Մաճառստան և Պանատի երկիրը, Պոհեմիա, Թրանսիլվանիա, և այլն ։ Սաքսոնիոյ տէրութեան մէջ Էրցկէպիրկէ ։ Հաննովէրի տէրութեան մէջ Հարց ։ Օսմանեան ինքնակալութեան մէջ Մակեդոնիա, Ալպանիա, Բոսնիա, և այլն ։ Պրուսի թագաւորութեան մէջ Սաքսոնիոյ, Հռէնոսի գաւառները, և այլն ։ Անգղիոյ տէրութեան մէջ Քըմպըրլէնտ, Տէրպի, Ֆլինդ, և այլն ։ Գաղղիոյ մէջ Ֆինիսդէր, Լօզէր, Վօժը ։ Նորվեկիոյ ու Շուէտի տէրութեան մէջ Պուսքէրուտ, Վէսդէրաս, Սդօրա–Քօփփարպէրկ ։ Նասսաւի դքսութեան մէջ ։ Սարտենիոյ տէրութեան մէջ Սավոյա, և այլն ։

ԱՆԱԳ ։ — Անգղիոյ տէրութեան մէջ Քոռնուոլլիս, Տէվըն ։ Սաքսոնիոյ տէրութեան մէջ ։ Աւստրիոյ կայսրութեան մէջ Պոհեմիա ։

ՍՆԴԻԿ ։ — Սպանիոյ թագաւորութեան մէջ Մանչա ։ Աւստրիոյ կայսրութեան մէջ Քառնիոլա, և այլն ։ Պաւիերայի թագաւորութեան մէջ Հռէնոս, և այլն ։

ՊՂԻՆՁ ։ — Անգղիոյ տէրութե. մէջ Քոռնուոլլիս, Էնկլըսի, Իռլանտա, Տէվըն, Ուէյլզ, և այլն ։ Ռուսի ինքնակալութեան մէջ Բէրմ, և այլն ։ Աւստրիոյ կայսրութեան մէջ Մաճառստան և Պանատի երկիրը, Պէլլունի գաւառը, Շդիրիա, և այլն ։ Նորվեկիոյ ու Շուէտի տէրութեան մէջ Սդօրա–Քօփփարպէրկ, Սոնդրէ, Դրոնդհէյմ, Լինքէօփինկ, Վէսդէրաս ։ Օսմանեան ինքնակալութեան մէջ Մակեդոնիա, և այլն ։ Պրուսի թագաւորութեան մէջ Սաքսոնիոյ, Հռէնոսի գաւառները, և այլն ։ Սպանիոյ մէջ Անտալուսիա, և այլն ։ Գաղղիոյ մէջ Հռօդանոս, վերին Հռէնոս, և այլն ․ ստորին Պիրենեանք ։ Հաննովէրի տէրութեան մէջ, և այլն ։

ԵՐԿԱԹ ։ — Անգղիոյ տէրութեան մէջ հարաւային Ուէյլզ, Սդէֆֆըրտ, Շրօփ, Եորք, Սկովտիա, և այլն ։ Ռուսի ինքնակալութեան մէջ Բէրմ, Օրէնպուրկ, Դամպով, Նիժնիյ Նովկորոտ, Քալուկա, Օլօնէց, Վիադքա, և այլն ։ Գաղղիոյ մէջ վերին Մառն, Քոդ տ' օր, Մէօզ, Նիէվր, վերին Սաօն, Մոզէլ, Մէօրթ, Արտէնը, Տուպ, Ժիւր, Առիէժ, և այլն ։ Պրուսի թագաւորութեան մէջ Սիլեզիա, Հռէնոս, Պրանտէպուրկ, և այլն ։ Նորվեկիոյ և Շուէտի թագաւորութեան մէջ Օրէպրօ, Սդօրա–Քօփփարպէրկ, Գարլշդատ, Կէֆլէպուրկ, Վէսդէրաս, Լինքէօփինկ, Ուփսալա, և այլն ․ Շուէտի մէջ Սմալէնէնէ ։ Նորվեկիոյ մէջ Լաուրվիկ ։ Աւստրիոյ կայսրութեան մէջ Շդիրիա, Քարինդիա, Մաճառստան և Պանատի երկիրը, Պոհեմիա, Թրանսիլվանիա, Միլանի գաւառը, և այլն ։ Դոսկանայի մեծ դքսութեան մէջ Էլպա կղզին ։ Սպանիոյ մէջ Քադալոնիա, Արակոնա, Նավառրա, Պիսքայիա, Ասդուրիա, Կրանադա, և այլն ։ Օսմանեան ինքնակալութեան մէջ Բուլղարք, Բոսնիա, Մակեդոնիա ։ Պաւիերայի մէջ ։ Սարդենիոյ տէրութեան մէջ Բիէմոնդէ, և այլն ։ Նասսաւի դքսութեան մէջ, և այլն ։

ԿԱՊԱՐ ։ — Անգղիոյ տէրութեան մէջ Տէնպի, Ֆլինդ, Քըմպըրլէնտ, Նորթհըմպըրլէնտ, Տիւրհէմ, Եորք, Տէրպի, և այլն ։ Սպանիոյ մէջ Կրանադա, Անտալուսիա, Քադալոնիա, և այլն ։ Աւստրիոյ կայսրութեան մէջ Կարինդիա, Մաճառստան, Պոհեմիա, և այլն ։ Պրուսի թագաւորութեան մէջ Շլէզիա, Հռէնոս, և այլն ։ Հաննովէրի տէրութեան մէջ ։ Գաղղիոյ մէջ Ֆինիսդէր, և այլն ։ Նասսաւի դքսութեան մէջ ։ Սաքսոնիոյ մէջ ։ Սարդենիոյ տէրութեան մէջ Սավոյա, Սարտենիա, և այլն ։

ՑԻՆԿ ։ — Պրուսի թագաւորութեան մէջ Շլէզիա, և այլն ։ Պելճիոյ մէջ ։ Անգղիա ։ Աւստրիոյ կայսրութեան մէջ Կարինդիա, և այլն ։

ՀԱՆՔԱՅԻՆ ԱԾՈՒԽ ։ — Անգղիոյ տէրութեան մէջ Նորթհըմպըրլէնտ, Տիւրհէմ, Քըմպըրլէնտ, Սդէֆֆըրտ, Տէրպի, Լէնքէսդը, Եորք, Լէյսէսդըր, հարաւային Ուէյլզ, և այլն՝ Անգղիոյ մէջ ․ Լօթհիէն, Լէնարք, Ռէնֆրիու, Էյր, և այլն՝ Սկովտիոյ մէջ ։ Պելճիոյ մէջ Մօնս, Նամիւր, Լիէժ, և այլն ։ Գաղղիոյ մէջ Նոռ, Լուառ, վերին Լուառ, Քալվատոս, և այլն ։ Պրուսի թագաւորութեան մէջ Սիլէզիա, Վեսդֆալիա, Հռէնոս, և այլն ։ Աւստրիոյ կայսրութեան մէջ Պոհեմիա, Մաճառստան, ստորին Աւստրիա, Շդիրիա, Մորավիա, և այլն ։

ՀԱՍԱՐԱԿ ԱՂ, ՑԱՄԱՔԻ, ԾՈՎՈՒ, և այլն ։ — Ռուսի ինքնակալութեան մէջ Սարադով, Բէրմ, Տաւրիա, Աժտէրխան, Պէսարապիա, և այլն ։ Աւստրիոյ կայսրութեան մէջ Կալիցիա, Թրանսիլվանիա, արեւելեան Մաճառստան, վերին Աւստրիա, Սալցպուրկ, Թիրոլ, Վենետիկ, Տալմաչիա, Թրիեստ, և այլն ։ Գաղղիոյ մէջ ստորին Շարանդ, Մէօրթ, Ժիւր, ստորին Լուար, Վանտէ, Կար, և այլն ։ Սպանիոյ մէջ Քադալոնիա, Կրանադա, Նավառրա, Սիվիլիա, Վալէնցիա, Իվիցա, և այլն ։ Անգղիոյ տէրութեան մէջ Չէշըր, Ուորչըսդէր, Սդէֆֆըրտ, Նորֆոք, Քէնդ, Ֆայֆ, Մընսդէր, Ուլսդէր, և այլն ։ Բորդուկալի մէջ Սէդուպալ, Լիսպոնա, Ֆիկուէյրա, են ։

Պրուսի թագաւորութեան մէջ՝ Սաքսոնիա, Վեստֆալիա , Բոհէմիա , և այլն : Վալաքիա և Մոլտաւիա : Սարտենիոյ տէրութեան մէջ՝ Սարտէնիա , Ճէնովա : Երկուց Սիկիլեայց մէջ՝ Սիկիլիա , Փուլիա , Քալապրիա , և այլն : Պաւիերայի մէջ՝ Իսար , և այլն : Հռովմայ սահմանին մէջ՝ Փորլի , և այլն : Նորվեկիոյ ու Շուետի թագաւորութեան մէջ՝ Սմայէլանտ , Պոհուս՝ Շուետի մէջ . Դոնտէրկ՝ Նորվեկիոյ մէջ : Յոնիական կղզիներուն մէջ՝ Սանդա-Մաւրա : Յունաստանի մէջ՝ Նաքսոս կղզին :

ՓԼԱՏԻՆ :— Ռուսի ինքնակալութե՛ մէջ՝ Բերմ:

ՄԱՐՄԱՐԻՈՆ :— Իտալիա , Գաղղիա , Սպանիա , Պելճիա , Գերմանիա , և այլն :

ԾԾՈՒՄԲ :— Իտալիա , Սպանիա , և այլն :

Եւրոպայէն հիմայ որչափ արծաթ որ կ'ելլէ՝ այս դարուս սկիզբը Ամերիկայէն անկէ տասնըմէկ անգամ աւելի կ'ելլէր . իսկ ոսկին ա՛լ աւելի էր , բայց վերջէն Եւրոպա ոսկւոյ հանքերը շատցան . վասն զի հիմայ միայն Ռուսաստան՝ Կովկասի ոսկւոյ ու փլատինի նոր հանքերէն Եւրոպայի ոսկւոյն եօթնին վեցը կը մատակարարէ , Մաճառստան ու Թրանսիլվանիա՝ եօթնին մէկը : Անգլիա , որ հասարակ մետաղներու կողմանէ ճոխ է , ազնիւ մետաղները շատ նուազ են . Եւրոպայի երկաթին երրորդ մասը իրմէ կ'ելլէ , չորրորդը՝ Ռուսաստանէն , հինգերորդը Գաղղիայէն , տասներորդը՝ Շուետէն , մնացածն ալ ուրիշ տէրութիւններէն : Անգլիոյ երկաթը թէպէտ ազնիւ չէ , բայց շատ աժան է . Ռուսաստանի ու Զուիցերիի երկաթը շատ ազնիւ է , մանաւանդ պողպատ շինելու համար . Գաղղիայէն թէ աղէկ երկաթ կ'ելլէ և թէ գէշ : Եւրոպայի մէջ մեքենայ , անօթ , և այլն , շինելու համար թափծու ձեռագործներուն վեցին հինգը Անգլիոյ գործարաններէն կ'ելլէ , տասնին մէկը Գաղղիայէն , և քառասունին մէկը Պրուսէն . Ռուսաստանէն ու Շուետէն քիչ կ'ելլէն : Եւրոպայի բոլոր հանքերուն մէջէն չորսին իրեքը երկաթ է . իսկ ոսկին , արծաթն ու փլատինը՝ մէկ իններորդն են : Եւրոպայի մէջ գործածուած կապարին կէսը Սպանիայէն կ'ելլէ , և եօթնին իրեքը՝ Անգլիայէն . իսկ Գաղղիայէն ու Գերմանիայէն իրենց ընդարձակութեանը համեմատ քիչ կ'ելլէ : Անգլիան տասնպատիկ աւելի քան զԳաղղիան հանքային ածուխ կը բերէ , Պելճիան ու Պրուսը՝ մէկ ու կէս անգամ աւելի : Եւրոպայի պղնձին գրեթէ կէսէն աւելին Անգլիայէն կ'ելլէ . նոյնպէս անագին տասուիրեքին տասուերկուքը Անգլիայէն կ'ելլէ , մէկ հինգերորդը՝ Ռուսաստանէն , տասնին մէկը՝ Շուետէն , իսկ Գաղղիայէն ամենաքիչ կ'ելլէ :

## ԱՌԱԿ

## Փիղ և Մրջիւն :

Ընդ պողոտայս փիղ ածէին
Հասարակաց 'ի հանդէս ,
Բանգլի առ մեզ յաղթ կենդանին
Հազիւ երբէք գայ 'ի տես :
Խռնէր խուժան ըզհետ փըղին
Ի վիթխարին կալեալ դէտ .
Բայց և շընիկ մի ել չընչին
Դէմ կենդանւոյն անհեթեթ .
Տեսեալ ըզփիղն ընդ ամբոխին
Հաջէր ճըչէր վազվազէր ,
Խուռն ինչ մեկնէր , դառնայր կըրկին ,
Փիղն անխըռով յառաջէր :
“ Ա՛ խայտառակ գըծուծդ 'ի շանց ,
Գոչեաց առ նա այլ մի շուն .
Ի փիղ հաջել 'ի սիգապանծ
Չէ քեզ 'ի ճահ քաջութիւն .
Ո՞չ տեսանես , մինչ գաս 'ի վէզ
Ընդ հըսկայիդ պնդակուշտ ,
Գա՛ քեզ չառնէ երես երբէք ,
Զայնիդ չանսայ բանդագուշ ,, :
“ Ահա այդ իսկ է իմ խրախոյս ,
Արկնեաց շընիկն ըզբարբառ ,
Զի դէմ փըղին ես սինլըքորս
Համարձակիմ 'ի պայքար .
Զինէն այլ շունք առցեն ճառել,
Թէ վա՛հ շընիկ քաջարի ,
Որ անվեհեր 'ի կռուի ել
Ընդդէմ փըղին վիթխարի ,, :

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ՔՐԻԼՈՎԷ
ՍՏԵՓԱՆ ԲԱՍՏԱՄԵԱՆՑ
ԲԺԻՇԿ ՏՓԽԻՍԵՑԻ

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ